# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

21.09.2024



Սեպտեմբերի 21-ը՝ մեր անչափ թանկ ու սիրելի հայրենիքի Անկախության օրը, հայ ժողովրդի ազատությունը, միասնության հաղթանակն ու անսասան ոգին մարմնավորող օրն է:

**Սիրելի՛ հայրենակիցներ, սրտանց շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով:**

Այս օրը մեզ համար ոչ միայն պետական ամենակարևոր տոնն է, այլ նաև մեր ազգային արժանապատվության և ինքնիշխանության, ավելի լավ ապագայի ձգտելու և միասնականության խորհրդանիշն է:

Երեսուներեք տարի առաջ վերականգնելով դարերով երազած անկախությունը՝ նոր էջ բացեցինք Հայոց պետականության պատմության մեջ:

Ու երբ խորհում ենք, թե ինչպես հասանք դրան, երբ հիշում ենք անկախությունը նվաճելու և պահպանելու համար պայքարում նորանկախ մեր հանրապետության ինքնիշխանության համար կյանքը զոհած հայորդիների մասին, առավել պարտավորված ենք զգում վերահաստատելու մեր հանձնառությունը՝ կառուցելու խաղաղություն մեր տարածաշրջանում և ամեն օրվա նվիրումով աշխատելու մեր երկրի զարգացման ու բարգավաճման համար:

Թո՛ղ այս տոնական օրը մեզ նոր ոգի և վճռականություն ներշնչի՝ համատեղ ուժերով մեր երկրի ապագան կերտելու համար:

Մենք միասին կարող ենք հաղթահարել բոլոր մարտահրավերները և կառուցել այն Հայաստանը, որի մասին երազել են մեր նախնիները:

**Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:**

**Կեցցե՛ ազատ և անկախ Հայաստանը:**